60-ԱՄՅԱԿ

Լրացավ Հայ Եկեղեցու բազմավաստակ հոգևորականներից մեկի՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ծննդյան 60 և քահանայագործության 40-ամյակները: Այս բազմաօժտված և բոլորանվեր հայ հոգևորականի մասին միայն կարելի է ասել հետևյալը՝ իր թույլտվությամբ դիմելով իրեն.

Սիրելի՛ Սրբազան Հայր.

Ձեր 40-ամյա աստվածընծա ծառայության ընթացքում, լինի սփյուռքում, թե հայրենիքում, ճանաչվել ու ընդունվել եք որպես նվիրյալ կրոնավոր-մտավորական: Վարչական ու կազմակերպական տարբեր պաշտոններ եք վարել, եղել եք ճեմարանի տեսուչ, թեմական առաջնորդ, 1700-ամյակի տոնակատարությունների կրոնական հանձնախմբի վարիչ-տնօրեն, երբեք չեք դավաճանել Ձեր ստեղծագործ էությանը, նաև գրչով ծառայել եք ազգային-կրոնական մշակույթի զարգացմանը: Ձեր գրչին պատկանող տարբեր գրվածքները, հայերեն լինեն դրանք, թե անգլերեն, նվիրված են եղել Հայոց Եկեղեցու պատմությանն ու նվիրապետությանը, հայ միջնադարյան մշակույթին: Թարգմանական աշխատանքներն ու նոթագրություններն իրենց գրավիչ, անմիջական ոճով մեծ հետաքրքրությամբ են ընթերցվել: Մեծ է դրանց ճանաչողական արժեքը:

Հայ մշակույթի նկատմամբ Ձեր սերն ու սրտացավ վերաբերմունքն է այն մղիչ ուժը, որով պայմանավորված է Ձեր հովանավորչական գործունեությունը: Որքա՜ն երախտապարտ են Ձեզ հայ գիտական մտքի այն բոլոր մշակները, որոնց աշխատանքի պտուղները լույս են տեսել Ձեր աջակցությամբ՝ Ձեր խնայած միջոցներով: Որքա՜ն երախտապարտ են Ձեզ այն բոլոր կարիքավոր ուսանողներն ու զոհված ազատամարտիկների ընտանիքները, որոնց հովանավորությունն եք ստանձնել՝ ղեկավարելով «Մեծն Ներսես» բարեսիրական գրասենյակը:

Ողջ աշխարհի ապագայի հայորդիները երախտապարտ են լինելու Ձեզ այն աշխատանքի համար, որ իրագործում եք Փարիզում հաստատված «Հայրենիք և մշակույթ» կենտրոնի գործունեության շրջանակում՝ ի նպաստ հայոց հուշարձանների պահպանմանն ամբողջ աշխարհում և խոնարհված եկեղեցիների նորոգմանը հայրենիքում:

Առանձնահատուկ սիրով են հիշվում Ձեր կազմակերպած ուխտագնացությունները դեպի Արևմտյան Հայաստան: Այդ նախաձեռնությունը տասնամյակներում քողարկված նվիրական բաղձանքի մարմնացումն էր ուխտի բոլոր մասնակիցների համար, իսկ տեսաժապավենի օգնությամբ ականատես բազմահազար հայրենակիցների համար՝ հեռակա հաղորդակցման հնարավորություն նվիրական սրբությունների հետ:

Ազնիվ մտավորական, գրող, բարերար, հրատարակիչ,- ահա ոչ լրիվ, բայց խոսուն այն մակդիրները, որով ամեն մի հայ հպարտությամբ բնութագրում է Ձեզ: Եվ որքա՜ն կշահեր հայ իրականությունը, եթե ամեն մի հայ աշխարհական, թե հոգևորական, իր կարողությունների չափով իբրև օրինակ վերցներ Ձեզ, առաջնորդվեր Ձեր կերպարով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Ձեր ծննդյան 60 և քահանայագործության 40-ամյակները՝ մաղթելով Ձեզ քաջառողջ կյանքի տարիներ և հետագա ստեղծագործական հաջողություններ:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ